Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում

ԵՄ ֆինանսավորմամբ եւ ՄԱԱԶԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագիր

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թիվ 14

2025թ. հունիս

ՄԱԱԶԿ-ն զարգացնում է ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ -ի կարողությունները

2025 թ. հունիս ամսվա ընթացքում ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԱԶԿ), Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրի շրջանակում, կազմակերպեց վերապատրաստման դասընթացներ Ստանդարտների և չափագիտության ազգային մարմնի (ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ) աշխատակիցների կարողությունները զարգացման համար:

Նպատակ. համապատասխանեցնել Հայաստանի որակի ենթակառուցվածքը ԵՄ չափանիշներին և աջակցել միջազգային հավատարմագրման գործընթացին:



ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի վեց աշխատակից մասնակցեց ճնշման տրամաչափիչների և օդային ճնշման հավասարակշռիչների կիրառման վերապատրաստման դասընթացի: Այն ուղղված էր բարձր ճնշման սարքավորումների անվտանգ օգտագործման, տրամաչափման ընթացակարգերի, միջլաբորատոր համեմատությունների և չափումների անորոշությունը նվազագույնի հասցնելու կարողությունների զարգացմանը:



«Էլեկտրական տրամաչափարկման լաբորատորիայի աուդիտ» դասընթաց (հունիսի 16–20)

ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի տասնմեկ աշխատակից մասնակցեց ներքին աուդիտի վերապատրաստման դասընթացի՝ ISO/IEC17025 պահանջներին համապատասխան: Միջազգային փորձագետի աջակցությամբ իրականացված մոդելային աուդիտի արդյունքում մասնակիցները հնարավորություն ունեցան գնահատել ընթացիկ լաբորատոր գործընթացները, վեր հանել բացթողումները և ուրվագծել բարելավմանն ուղղված քայլերը:

«Որակի կառավարում և ներքին աուդիտ» վերապատրաստման դասընթաց (հունիս 23–27)

ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի տասն աշխատակից մասնակցեց լաբորատոր որակի կառավարման համակարգերի գնահատման դասընթացի՝ հիմնված ԵՈԿ անդամ հանդիսացող և միջազգային ճանաչում ունեցող Quality Austria հավաստագրման սխեմայի վրա: Մասնակիցները խորացրեցին գիտելիքներն աուդիտի մեթոդների կիրառման, ստանդարտների պահանջների մեկնաբանման, լաբորատորիայի ընդհանուր աշխատանքի ու դրա համապատասխանության գնահատման ուղղությամբ:

ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի տասն աշխատակից հաջողությամբ հանձնել է լաբորատոր աուդիտորի հավաստագրման քննությունը

Հունիսի 23-27-ն անցկացված «Որակի կառավարում և ներքին աուդիտ» վերապատրաստման դասընթացի ավարտին Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին-ի (ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ) 10 աշխատակից հաջողությամբ հանձնել է լաբորատոր աուդիտորի հավաստագրման քննությունը՝ ստանալով Եվրոպական Որակի Կազմակերպության (EOQ) լաբորատոր աուդիտորի վկայական:

🌍 ՀՀ ներկայացուցիչը Վիեննայում մասնակցել է ՄԱԱԶԿ–ISO աշխատաժողովին

2025թ. հունիսի 11-13-ը Ստանդարտների և չափագիտության ազգային մարմնի (ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ) որակի կառավարիչը ներկայացրեց Հայաստանը Վիեննայում անցկացված ՄԱԱԶԿ-ի և ISO-ի՝ «Աջակցություն զարգացող երկրներին կայուն լաբորատոր ենթակառուցվածքի ստեղծման գործում» թեմայով համատեղ աշխատաժողովի: Սեմինարը կայացավ ISO/TC 336 տեխնիկական կոմիտեի լիագումար նիստի շրջանակում և համախմբեց ավելի քան 120 մասնակից 30 երկրներից:

ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի ներկայացուցիչը ներկայացրեց Հայաստանի փորձն ու ռազմավարական մոտեցումը կայուն, խելացի և թվանշային տրամաչափման լաբորատորիաների ստեղծման ուղղությամբ:

Ծրագրի մասին

«Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագիրն իրականացնում է ՄԱԱԶԿ-ը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ: Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի կարողությունները՝ շահառուներին միջազգայնորեն ընդունելի չափագիտական ծառայություններ մատուցելու համար: Հայաստանի չափագիտության համակարգի իրավական, կառուցվածքային եւ տեխնիկական կարգավորումների բարելավման միջոցով ծրագիրը նպաստում է համակարգի արդիականացմանը՝ խթանելով տնտեսության դիվերսիֆիկացիան եւ առեւտրի մրցունակության բարձրացումը, ինչը համահունչ է ԵՄ-ի հետ ստորագրված «Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով» (CEPA) Հայաստանի ստանձնած հանձնառություններին:

Ծանոթագրություն

Ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից: Այս տեղեկագրի բովանդակության պատասխանատուն բացառապես հեղինակներն են եւ այն կարող է չարտահայտել Եվրոպական միության եւ ՄԱԱԶԿ-ի տեսակետները: Այս տեղեկագիրը հրապարակվել է «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Տեղեկագիրը պատրաստվել է առանց Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական խմբագրման:

Ծրագրի արդյունքները (2025թ. հունիս)

ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի 28 աշխատակցի վերապատրաստում կարողությունների զարգացման երեք դասընթացի արդյունքում

1673 դիտում սոցիալական մեդիայի հարթակներում հրապարակումներ ի արդյունքում

500 հետևորդ ծրագրի սոցիալական մեդիայի հարթակներում

Լրացուցիչ տեղեկության համար դիմել՝
Ծրագրի ղեկավար Ցոնգ Վուին, C.WU@unido.org

Նորությունների համար հետևեք մեզ՝

Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից